դապետի անուն, յետո՝ Շեհրիյ Չելեպի, խօճայ Սեֆեր եւ խօճա Գասպար եւ այլ սիրելիք եւ բարեկամք, ասացին թէ ծերութեան ժամանակ չէ պարտ այլ ազգաց դուռն որ երթայ. էվէլ պակաս խօսքներ լսէ վարդապետ. ահա անոր համար մնաց այսպես Կարապետ վարդապետի վըրան պարապն: Եւ դարձեալ ասեն քո հրամանուցդ բարեկամքներն. թէ Աստուած առաջնորդէ որ ինքն ի հոս գայ, նա անժամանակն կամք անէ հեշտ է պարապն շինալու: Ապա տէր վարդապետ այնպես մի կարծեր որ զհրամանքդ չուզելոյն. զԿարապետին անունն գրեցին ի մէջ պարապին. այլ զհրամանքդ խնայելոյ համար մէկ հեղէ տանկին բերանն չի տվաք. ապա հրամանքդ ես մեր հայր. մեր առաջնորդ, մեր հովիւ, մեր թագ ու պարծանք: Եւ թէ կամենաս Կարապետ վարդապետն հետ հայր որդոյ պես զբաղով որ դուրսի երկիրներն նուիրակ է. եւ քո հրամանքդ հոգեւոր դատաստան անես. եւ թէ ասես որ թէ ես պատրիարգ եմ նա՛ պարապն զիմ անունս պիտի շինի նա հրամանքդ մեր հայրն ես. մեզ խրատատու ես. դու քաջ գիտես պարապն այլ հրամանուցդ անունն անելու հանգիստ կու շինի»(*):

(*) Այս վաւերագիրը հրատարակելով Հ. Գր. Ծ. վրդ. Գալէմքեարեան, տակաւին այն ատեն անծանօթ Դարանաղցիի բովանդակութեան, չէր կրնար ճշդել այս նամակին ո՛չ ժամանակը եւ ո՛չ ալ ան-